Գ. Ս. ՔԻԼԻՄՋՅԱՆ

ԹՈՒՐՔ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ (1908—1912 թթ.)

1908—1912 թվականների թուրք-հունական հարաբերությունները արդի թուրք պատմագրության մեջ որոշ չափով լուսաբանված են։ Թուրք պատմաբաններից Յուսուֆ Հիքմեթ Բայուրը իր կապիտալ աշխատությունների համապատասխան հատորներում բավականին ծավալուն կերպով է շարադրել հիշյալ շրջանի պատմությունը։ Թուրք պատմաբաններից մի քանիսը ևս, երիտասարդ թուրքերի բալկանյան քաղաքականությունը բնութագրելիս, այս կամ այն չափով անդրադարձել են Հունաստանի նկատմամբ երիտասարդ թուրքերի վարած արտաքին քաղաքականությանը և տվել նրա գնահատականը։

Ընդհանրապես, երիտթուրքերի բալկանյան քաղաքականության գնահատականը թուրքական գրականության մեջ խիստ բացասական է, որովհետև, թուրք հեղինակների կարծիքով սխալ այդ քաղաքականությունը «հսկայական Ռումելիի և Էգեյան ծովի կղզիների կորստյան պատճառ հանդիսացավ»։

Ինչպես հայտնի է երիտթուրքերի իշխանության գլուխ անցնելու ժամանակ, Օսմանյան կայսրության նախկին նահանգներից Կրետե կղզին, 1896—97 թվականի ապստամբության հետևանքով, փաստորեն և իրական տեսակետից այլևս թուրքական տիրապետության տակ չէր գտնվում։ Այդ ժամանակվանից կղզու հովանավորությունն անցել էր Անգլիային, Ֆրանսիային, Իտալիային և Ռուսաստանին, որոնք ստանձնած պարտավորությունների համար կոչվում էին «պաշտպան տերություններ»։ Բացի այդ, կղզուց դուրս հանվեցին թուրքական վարչության բոլոր ներկայացուցիչները և թուրքական զինված ուժերը, ու Կրետեն ինքնավարություն ստանալով, սկսեց

կառավարվել Հունաստանի թագավորի նշանակած գերագույն կոմիսարի կողմից, որն ազգությամբ հույն էր լինում։ Այսուհանդերձ, պաշտպան տերությունները ձևականորեն պահպանեցին սուլթանի վերհսկողական իրավունքները կղզու նկատմամբ, որն սակայն, խորհրդանշվում էր միայն Սուդայի ծոցում ծածանվող թուրքական դրոշով[1]։

Սակայն, 1908 թվականի հուլիսի 29-ին, այսինքն օսմանյան սահմանադրության վերահռչակումից ուղիղ 5 օր անց, «Serveti Funun» թերթը կրետական հարցին նվիրված խմբագրականում գրեց. «Սահմանադրության հռչակմամբ լուծվեց նաև կրետական խնդիրը։ Այժմ արդեն պետք է պառլամենտ հրավիրել կրետական պատգամավորներին»։

Թերթը հույս էր հայտնում, որ Հունաստանը, հաշվի առնելով Օսմանյան կայսրությունում սահմանադրության հռչակման իրողությունը և կայսրության մեջ բնակվող հույների շահերը, կհրաժարվի Կրետեն միացնելու իր մտադրությունից։ Թերթի կարծիքով, տերությունները, պաշտպանելով Թուրքիայի սուվերեն իրավունքները Կրետեի նկատմամբ, պետք է օգնեին նրան՝ կղզին իր տիրապետության տակ վերադարձնելու գործում[2]։

Երիտասարդ թուրքերը, սակայն, այդքանով չէին ուզում բավարարվել։ Նրանք ձգտում էին վերականգնել իրենց իշխանությունը ոչ միայն ձևականորեն Օսմանյան կայսրության կազմում գտնվող նահանգների՝ Բոսնիայի ու Հերցեգովինայի, Արևելյան Ռումելիի նկատմամբ, այլև կայսրության փաստական և իրավական տիրապետությունից վաղուց դուրս եկած երկրների՝ Եգիպտոսի, Ալժիրի և Թունիսի նկատմամբ[3]։

Ժամանակակից թուրք պատմաբանները արդարացնում են երիտասարդ թուրքերի այդ քաղաքականությունը։ Նրանց համոզմամբ՝ «Նոր իշխանությունը բերելու էր Եվրոպայի սահմանադրական պետությունների բոլոր շնորհները»։ Ուստի,—եզրակացնում են նրանք,— «բնական էր, որ կայսրության նախկին տերիտորիաները վերադարձվեին Թուրքիային»[4]։ Սակայն, 1908 թվականի հոկտեմ-

---

[1] J. St. Dutkowski, L'Occupation de la Crète (1897—1909), Paris, 1952.

[2] Ed. Driault, Histoire diplomatique de la Crèce, t. V, Paris, 1926, p. 3. „Речь", № 182, 1/14 авг., 1908 г.

[3] Tahsin Ünal, 1700 den 1958e kader Türk siyasi tarihi, Ankara, 1958, s. 192, Türkiye tarihi, cild 12, Istanbul, 1967, s. 189.

[4] Türkiye tarihi, c. 12, s. 189.

բերի 5-ին Բոսնիան ու Հերցեգովինան միացվեցին Ավստրո-Հունգարիային, իսկ Արևելյան Ռումելին հայտարարվեց անկախ Բուլղարիայի անբաժան մասը։ Երկու օր անց Կրետեն իր միությունը հռչակեց Հունաստանի հետ։

Այս դեպքերը խիստ կերպով սրեցին Օսմանյան կայսրության հարաբերությունները Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի հետ։ Այնուամենայնիվ, մի քանի ամիս անց, երիտասարդ թուրքերը համաձայնության եկան Վիեննայի ու Սոֆիայի հետ և վերջնականապես հրաժարվեցին նախկինում իրենց կայսրության կազմի մեջ մտնող հիշյալ երկու նահանգներից։

Բայց կրետական հարցը թուրք-հունական հարաբերություններում այլ ընթացք ընդունեց։ Միություն հռչակվելուց հետո տիրող 1—2 ամսվա լռությունը 1909 թվականի սկզբից փոխարինվեց հակահունական կատաղի կամպանիայով։ Հունաստանի վրա քաղաքական ճնշում գործադրելու նպատակով, երիտթուրքերը Օսմանյան կայսրության մեջ հելլենական ապրանքների ու առափնյա առևտուրը սպասարկող նավերի բոյկոտ սկսեցին։ Հակահունական կամպանիան տարածվեց նաև թուրքահպատակ հույների վրա, որոնք միաժամանակ ենթարկվեցին մոլեռանդ ամբոխի հալածանքներին։

Այդպիսով, կրետական խնդիրը 1908 թվականի վերջին դարձավ թուրք-հունական հարաբերությունների ամենասուր հարցը։ Գործերի նման ընթացքը, ժամանակակից թուրք պատմաբանների կարծիքով երիտասարդ թուրքերի կողմից Հունաստանի նկատմամբ վարած ոչ ճիշտ քաղաքականության հետևանք էր։

Յուսուֆ Հիքմեթ Բայուրը իր «Türk inkılâbi tarihi» աշխատության առաջին հատորում նշել է, որ Կրետե կղզին տարիներ ի վեր եղել է պաշտպան 4 տերությունների իրավասության տակ և կառավարվել է Հունաստանի թագավորի անունից։ Հետևաբար կղզին փաստորեն դուրս է գտնվել թուրքական վարչությունից[5]։

Մեկ այլ տեղում նա նշել է, որ կրետական ապստամբությունից հետո, կղզում թուրքական դրոշի առկայությունից բացի, թուրքական իշխանությունը այլ ձևով չէր ներկայացվում[6]։

Այդպիսով, եզրակացնում է նա, եթե կրետական հարցը 1908—1909 թվականներին մյուս հարցերի նման լուծում ստանար (այ-

---

[5] Jusuf Hikmet Bayur, Türk inkılâbi, tarihi, cild 1, Istanbul, 1940, s. 294.

[6] Bayur, նշվ. աշխ., հ. 2, մաս 1, էջ 409։

սինքն՝ եթե երիտթուրքերը Բոսնիայի ու Հերցեգովինիայի և Արևելյան Ռումելիի նման Կրետեից հրաժարվեին—Գ. Բ.), ապա Օսմանյան պետությունը չունենալով Բալկաններում որևէ բարդ խնդիր, ավելի նպաստավոր պայմաններում կգտնվեր[7]։

Իսկ ինչո՞ւ թուրքական կառավարությունը միանգամից չհրաժարվեց Կրետե կղզուց, ինչպես որ հարկադրված այն արեց սլավոնական հիշյալ նահանգների նկատմամբ։

Պատճառը, նշել է Բայուրը, այն էր, որ երիտթուրքերը բոլոր ասպարեզներում բազմաթիվ անհաջողություններ կրելով, ձգտում էին կրետական հարցը դարձնել պրոպագանդիստական հաջողությունների գրավական[8]։

Այդ անհաջողությունները վերաբերում էին ոչ միայն արտաքին, այլև ներքին քաղաքականությանը։ Չկարողանալով ներքին կյանքում հաղթահարել դժվարությունները, երիտթուրքերը փորձում էին արտաքին ավանտյուրաների միջոցով ամրապնդել իրենց իշխանությունը և շեղել կայսրության ժողովուրդների ուշադրությունը ներքին հրատապ խնդիրներից։

Կրետական հարցում օսմանյան կառավարության քաղաքականությունը բնորոշելիս, Բայուրը նշել է, որ երիտթուրքերը այդ կղզու պատճառով Հունաստանի նկատմամբ հանդես եկան մի շարք սպառնալիքներով[9], այդպիսով հաստատելով, որ թուրք-հունական հարաբերությունների սրման պատճառը նրանց վարքագիծն է։

Ինչպես հայտնի է, կրետական հարցի կապակցությամբ փոխադարձ հարաբերությունները այն աստիճանի սրվեցին, որ 1909—1910 թվականների ամռան ամիսներին թուրք-հունական պատերազմի իրական վտանգ առաջացավ։

Ի տարբերություն Բայուրի, որը Կրետեն Հունաստանին թողնելու քաղաքականության մեջ էր տեսնում Օսմանյան կայսրության համար ավելի նպաստավոր վիճակ, Ահմեդ Բեդևի Քուրանը հանդես է գալիս երիտասարդ թուրքերի քաղաքականության իրագործման ձևերի քննադատությամբ։ Նա կողմնակից է Կրետեն Օսմանյան կայսրության կազմում պահպանելու նրանց ծրագրին, սակայն խիստ բացասական վերաբերմունք է ցուցաբերում այդ հարցում իրականացված տակտիկային։

---

7 Bayur, նշվ. աշխ., հ. 1, էջ 294։

8 Նույն տեղում, էջ 324։

9 Bayur, նշվ. աշխ., հ. 1, էջ 324։

Երկրորդ սահմանադրության հռչակումից հետո ստեղծված պայմաններում, նշում է նա, երբ Օսմանյան կայսրության մեջ կատարված փոփոխությունները դեռևս բավականաչափ կայունացած չէին, իսկ բալկանյան երկրները թշնամական դիրք էին գրավել Կրետեի վերաբերյալ, պառլամենտի նախագահությանը ներկայացրած Հյուսեին Ջահիդ Բեյի թաքրիրը բոլորովին անտեղի էր։ Քուրանը ընդգծված թշնամանքով է արտահայտում իր վերաբերմունքը առանձնապես երիտթուրքերի օրգան «Tanin»-ի նկատմամբ, որի հրատարակած հոդվածների ազդեցությունը, նրա կարծիքով, չէր ավարտվել սոսկ կրետական հարցին վնաս հասցնելով, այլև «այդ վիճաբանությունները ամբողջ Ռումելիի ու կղզիների կորստյան հող պատրաստեցին»[10]։ Նա համոզված է, որ եթե երիտթուրքերը այդ հարցում կիրառեին ճիշտ տակտիկա և չհարուցեին հակահունական բոյկոտ, ազգային փոքրամասնությունների բացահայտ վեճեր, ապա կրետական հարցը կլուծվեր հօգուտ կայսրության[11]։

Քուրանը ենթադրում է, որ Կրետեի նկատմամբ հնարավոր կլիներ իրականացնել թուրք-հունական համաձայնությունը, եթե պահպանվեր օսմանյան գերիշխանությունը և, միաժամանակ, կղզու անմիջական ղեկավարությունը հանձնվեր հունական գահաժառանգին։ Հարցի լուծումը փոխանակ նման ճանապարհով իրագործելու,— նշել է նա,— երիտթուրքերը «հասարակական կարծիքը առավել մեծ չափով գրգռող թերթերի, մասնավորապես «Tanin» -ի բարբաջանքներին աջակցելը պետության շահերի համար համարել են ավելի օգտակար»[12]։

Երիտասարդ թուրքերը արհամարհել են ոչ միայն կրետական հարցի վերաբերյալ հունական կառավարության հետ որևէ բանակցություն սկսելու գաղափարը, այլ ընդհանրապես բալկանյան երկրների կողմից կատարված համաձայնության առաջարկները, իսկ «Օսմանյան արտաքին գործերի մինիստրությունը հնարել է մի շարք մտացածին տագնապներ և այդ ուղղությամբ կատարված առաջարկներին բնավ կարևորություն չի տվել»[13]։

Քուրանը հատկապես չի ներում երիտթուրքերին Հունաստանի

---

10 Ahmed Bedevi Kuran, Osmanlı imparatorluğunda inkılâp hareketleri ve milli mücadele, Istanbul, 1956, s. 542.

11 Նշվ. աշխ., էջ 542։

12 Նույն տեղում, էջ 543—544։

13 Նույն տեղում, էջ 544։

նկատմամբ վարած նրանց քաղաքականության համար։ Նրա համոզմամբ երիտթուրքերը կարող էին համաձայնության գալ Հունաստանի հետ և այդպիսով չեզոքացնել նրան ու հեռացնել բալկանյան սլավոններից։

Բայց այդ չի կատարվել և «Իթթիհատ վե Թերակկը»-ի կառավարությունը իր անխոհեմ գործողություններով վանել է Թուրքիայից և անգամ թշնամության հասցրել Հունաստանին, որը Բալկաններում մեր շահերին համահնչյուն դիրքերում էր գտնվում»[14]։

Այստեղ նա նկատի ունի Մակեդոնական հարցում գոյություն ունեցած հույն-սլավոնական վեճը, որն այդ շրջանում որոշ չափով, կարող էր հանդիսանալ թուրք-հունական մերձեցման պայմաններից մեկը։ Այդ կապակցությամբ նա նշել է. «Իմ նպատակը չէ պնդել հույների անկեղծության մասին։ Սակայն ընդհանուր շահերի շրջանակներում անգամ բարեկամության պահպանությունն հաջողություն չի ունեցել»[15]։

Քուրանը հայտնում է, որ նախասահմանադրական պաշտոնյաներից Սուրեյյա բեյը, Բալկանյան պատերազմից առաջ, Աթենքում հանդիպել է Վենիզելոսի և Թեոդոկիսի հետ։ Այդ տեսակցության ժամանակ հույն պետական գործիչները նրան հայտնել են, որ օսմանյան կառավարության կողմից կրետական հարցը հունական իղձերին համապատասխան լուծելու, Մակեդոնիայում հունական մեծամասնությանը սահմանադրական իրավունքներ շնորհելու դեպքում, թուրք-բուլղարական պատերազմի ժամանակ Հունաստանը կպահպանի չեզոքություն։ Հույն պետական գործիչները ցանկություն հայտնեցին վերոհիշյալ պայմաններով անհապաղ պաշտոնական բանակցություններ սկսել թուրքական կառավարության հետ։ Սակայն վերջինս անպատասխան թողեց այդ առթիվ Աթենքից ուղարկված Սուրեյյա բեյի հուշագիրը[16]։

Բացի այդ, նշում է Քուրանը, Բալկանյան պատերազմի հռչակման նախօրյակին Ռզա Թևֆիկ բեյի միջնորդությամբ հույների հետ կատարվող հատուկ բանակցությունները եթե թուրքական կառավարության կողմից արժանանային հավանության, գուցե Հունաստանը չմասնակցեր Թուրքիայի դեմ ուղղված պատերազմին[17]։ Ինչպես երևում է, այդ բանակցությունների հիմքում դրված էր Կրե-

---

14 Նույնի՝ Inkılâp tarihimiz ve „Jön Türkler", Istanbul, 1945, s. 313.

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում, էջ 315։

17 Նույն տեղում, էջ 314։

տեն Հունաստանին զիջելու պայմանը, որը, սակայն, չի ընդունվել թուրքական կառավարության կողմից[18]։

Հարց է ծագում թե ինչո՞ւ երիտթուրքերը ուշադրություն չդարձրին Հունաստանի հետ հարաբերությունները բարելավելու այդ հնարավորություններին և չնկատեցին Բալկաններում կազմակերպվող հակաթուրքական դաշինքը։

Որովհետև, պատասխանում է Քուրանը, «տարված լինելով կուսակցական վեճերով տեղյակ չեղանք Բալկաններում մեր դեմ կազմակերպվող դաշինքին։ Աշխարհի կացությունից անտեղյակ իթթիհատականները ժամանակը վատնել են իրենց հակառակորդներին ոչնչացնելով և պետությունը կուրորեն դեպի անդունդն են առաջնորդել»[19]։

Այնինչ, Օսմանյան կայսրության դեմ կազմակերպվող դաշնակցությունից ու նրան հաջորդած Ռումելիի և Էգեյան ծովի կղզիների կորստյան ողբերգական փաստից կարելի էր իբր խուսափել, եթե երիտասարդ թուրքերը կարողանային օգտվել բալկանյան երկրների միջև առկա տարաձայնություններից, համոզված կերպով եզրակացնում է Քուրանը[20]։

Այնուհետև նշելով, որ «թուրք յուրդու», «թուրք օջախ» և նման կազմակերպությունների ստեղծումը եթե մի կողմից թուրք երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունն էր հետապնդում, ապա մյուս կողմից այդ երևույթը անհանգստացրել էր հարևան պետություններին[21]։

Քննադատելով երիտթուրքերի պանթուրքական ցնորական պլանները, Քուրանը նշում է, որ Էնվեր փաշայի ու նրա համախոհների պանթուրքիստական գաղափարախոսությունը տվյալ պատմական պայմաններում ոչ միայն չէր կարող կենսագործվել, այլև այն Օսմանյան կայսրության փլուզման պատճառը պիտի հանդիսանար[22]։

---

18 Ինչպես հայտնի է, իտալո-թուրքական պատերազմում կրած պարտություններին և մի շարք այլ պատճառների հետևանքով, երիտթուրքերի կառավարությունը 1912 թվականի հուլիսի կեսերին տապալվեց։ Հետևաբար այդ բանակցություններն արդեն վարվում էին Ղազի Ահմեդ Մուհթարի «Ազատություն և համաձայնություն» ֆեոդալակոմպրադորական կուսակցության անդամներից կազմված «Մեծ կառավարության» ժամանակ, որի արտաքին գործերի մինիստրն էր Գաբրիել Նորատունկյանը։

19 Նույն տեղում, էջ 313։

20 Նույն տեղում, էջ 307։

21 Նույնի՝ Osmanlı imparatorlugunda inkılâp hareketleri, էջ 482։

22 Նույն տեղում։

Մեկ այլ պատմաբան՝ Թահսին Յունալը ևս հնարավոր էր համարում թուրք-հունական հարաբերությունների բարելավումը։ Նրա կարծիքով այդ մերձեցումը հնարավոր էր՝ Թուրքիայի կողմից սլավոնական աճող վտանգի պրոպագանդի պայմաններում։

Հունաստանը,— գրել է նա,— ամենօրյա աճող սլավոնական վտանգից վախենալով, որոնում էր Թուրքիայի հետ միանալու հարմար առիթներ։ Սակայն, փոխանակ Թուրքիայի բարեկամությունը փնտրող Հունաստանի հետ համաձայնության գալու, երիտթուրքերը ցանկանում էին համաձայնության գալ Սերբիայի հետ։

Մյուս կողմից՝ կատարվեցին մի շարք հակահունական քայլեր։ Փորձ արվեց փակել պատրիարքարանը, պահանջվեց վերադարձնել Կրետե կղզին։ Այս բոլորը և կայսրության ներսում տարվող լայն հակահունական կամպանիան,— խոստովանում է հեղինակը,— հուսախաբ արեցին հույներին[23]։

Երիտասարդ թուրքերի բալկանյան քաղաքականության քննադատներից է նաև Իսմայիլ Համի Դանիշմեդը։

Անդրադառնալով Կրետեից պաշտպան պետությունների ջոկատների էվակուացիային, Դանիշմենդը ցավով է գրում. «Բնականորեն, Կրետեի էվակուացիան նշանակում էր, որ այն անցնում էր Հունաստանին»[24]։

Սակայն, շարունակում է նա, այդ իրադարձությունը թուրքական կառավարության կողմից չընդունվեց որպես կատարված փաստ, ինչպես որ այն եղավ Բոսնիայի և Արևելյան Ռումելիի նկատմամբ։

«Կրետեի միացման կապակցությամբ,— գրում է նա,— հելլենական ապրանքների բոյկոտ հայտարարվեց, ժողովրդի մեջ սկսվեց ընդհանուր հուզմունք և սուգ, այնուհետև «Իթթիհատ վե Թերակկը» կուսակցության աղմկարարները «Կրետեն մեր հոգին է...» բնաբանով մի ամբոխավարական պրոպագանդա սկսեցին և ամենուրեք փոքրիկ երեխաների գլխարկներին ամրացրին մետաքսաթելով ասեղնագործված «Կրետե կամ՝ մահ» արտահայտությունը։ Այս բոլորի հետևանքով թուրք-հունական վեճը հարատև բնույթ ընդունեց»[25]։

Կրետական հարցի կապակցությամբ թուրք-հունական հարաբերությունների սրումը ստիպեց երիտասարդ թուրքերին համաձայնության եզրեր փնտրել Բուլղարիայի ու Սերբիայի հետ, սակայն

---

23 *Tahsin Ünal*, նշվ. աշխ., էջ 202—203։

24 İsmail Hami Danışmend, Izahlı Osmanlı tarihi kronolojisi, c. 4, Istanbul, 1961, s. 367.

25 Նույն տեղում, էջ 367—368։

այդ որևէ արդյունք չտվեց։ «Պատճառը,—նշում է Դանիշմենդը,—այն էր, որ երիտասարդ թուրքերը վարում էին անշրջահայաց ու անմիտ քաղաքականություն[26]։ Իսկ թե որն էր այդ անշրջահայաց ու անմիտ քաղաքականության էությունը, նա լռում է։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ երիտթուրքերի հետապնդած ագրեսիվ նպատակները Բալկաններում տարածվում էին ոչ միայն Հունաստանի, այլև Բուլղարիայի ու Սերբիայի վրա։ Ուստի, երիտթուրքերը ամեն առիթով բալկանյան երկրներին ահաբեկելու և Իսլամի ուժը ցուցադրելու առիթները չէին փախցնում։ Հայտնի է, որ Սուլթան Ռեշադը 1911 թվականի հունիսի 2-ին շրջապատված 40 հազարանոց բանակով և հազարավոր ալբանացիներով, Կոսովո դաշտում հրապարակային աղոթք կատարեց սուլթան Մուրադի դամբարանի վրա։ Այդ պարզապես բալկանյան երկրներին ահաբեկելու ցույցերի դրսևորումներից մեկն էր։ Ինչպես նշել է ռուսական կառավարական օրգանը, այդ՝ «իսլամի ահռելի ցույցն էր»[27]։

Արտաքին քաղաքականության ագրեսիվ ուղղությանը զուգահեռ, երիտթուրքերը իրենց ազգային քաղաքականությամբ ձգտում էին կայսրության բոլոր քրիստոնյա ժողովուրդներին ձուլել և ստեղծել թուրքական համասեռ կայսրություն։

Բալկանյան երկրների ղեկավարները շատ լավ էին ըմբռնում, թե ուր են գնում երիտթուրքերի նպատակները։ Ուստի նրանք հրաժարվեցին Թուրքիայի հետ Բալկանյան դաշինք կնքելու գաղափարից և ընդհանուր համաձայնության եկան նրա դեմ։ Ահա այդ էր երիտասարդ թուրքերի վարած արտաքին քաղաքականության «անշրջահայացության և անմտության» հետևանքը, որի մեկնաբանությունից խուսափել է Դանիշմենդը։

Նշելով թուրք-սլավոնական համաձայնության ձախողումը Բալկաններում, Դանիշմենդը գրում է. «Սակայն, «Իթթիհատ վե Թերակկի»՝ թուրք-բուլղարո-սերբական համաձայնության ձևաքերման կապակցությամբ այդ անշրջահայաց ու անմիտ քաղաքականությունը անարդյունք վախճան չի ունեցել միայն, այլ պատճառ է դարձել Թուրքիայի դեմ ուղղված հույն-բուլղարո-սերբական դաշինքի կնքմանը»[28]։

Ըստ Դանիշմենդի, երիտթուրքերի բալկանյան քաղաքականու-

---

26 Նույն տեղում, էջ 368։

27 Правительственный Вестник, 1911, № 119, 4 (17) июня, с. 3.

28 Danişmend, նշվ. աշխ., էջ 368։

թյան հիմնական սխալը բալկանյան երկրների միջև եղած հակասություններից օգտվել չկարողանալն էր, հակասություններ, որոնք «նրանելի» Աբդուլ Համիդի շրջանում այնքան վարպետությամբ էին օգտագործվում այդ երկրները մեկը մյուսի դեմ հրահրելու, նրանց միջև թշնամությունը առհավետ պահելու և դրանով իսկ նրանց միջև դաշինքի որևէ փորձ անիրական դարձնելու համար։

Սակայն, Դանիշմենդը, իզուր է այդքան «խստորեն» քննադատել երիտթուրքերին, որովհետև նրանք բոլորովին էլ չէին հրաժարվել բալկանյան պետություններին մեկը մյուսի դեմ լարելու քաղաքականությունից։ «Բաժանիր՝ որ տիրես» քաղաքականությունը երիտասարդ թուրքերի ամենալավագույն զենքն էր ինչպես բալկանյան պետությունների, այնպես էլ Օսմանյան կայսրության կազմում գտնվող քրիստոնյա ժողովուրդների իրար դեմ թշնամացնելու, նրանց միջև անվստահության մթնոլորտ ստեղծելու, քրդերի ձեռքով անդեն հայ բնակչությանը ջարդելու համար և այլն։

Երիտթուրքերի կողմից հատուկ նպատակներով ընդունած «Ռումելիում գտնվող վիճելի եկեղեցիների ու դպրոցների մասին» օրենքը, որը նոր հակասություններ էր ստեղծելու բալկանյան երկրների միջև, Դանիշմենդը ներկայացնում է այնպես, որ իբր թե այն վերացնելով նրանց միջև եղած տարաձայնությունները, հարթել էր Թուրքիայի դեմ բալկանյան դաշինքը կնքելու ճանապարհը...[29]։

Ուրեմն, ըստ Դանիշմենդի, երիտթուրքերը ոչ միայն ի վիճակի չեն եղել բալկանյան ժողովուրդների միջև պահել թշնամությունը, այլև վերջիններիս համար ձեռնտու օրենքներով նպաստել են նրանց միջև գոյություն ունեցած հակասությունների վերացմանը.... Այս արտառոց և իրականությանը չհամապատասխանող միտքը հատուկ չէ միայն Դանիշմենդին։

Դանիշմենդի իդեալը Աբդուլ Համիդն էր, նոր պատմության արյունառուշտ միապետներից մեկը։ Միայն և միայն նա կարող էր փրկել Օսմանյան կայսրությունը կործանումից։ Այդ էր պատճառը, որ նա, կարծես հանրագումարի բերելով իթթիհատի ամբողջ գործունեությունը, նրա ամենամեծ և աններելի սխալը համարում է Աբդուլ Համիդին փշխանությունից հեռացնելը։ «Իթթիհատ վե թերակկը»-ի կոմիտեի կողմից այս երկրին հասցրած մեծագույն չարիքը կայանում է սուլթան Համիդին՝ եվրոպական քաղաքականու-

---

29 Danişmend, նշվ. աշխ., էջ 383։

Թյան ոլորտում 33-ամյա փորձառությամբ իմաստացած միապետին իշխանությունից հեռացնելու մեջ»[30]։

Ի տարբերություն Դանիշմենդի, որն իդեալականացնում է Համիդի քաղաքականությունն ընդհանրապես, Յաշար Նաբին քննադատում է այն տեսակետը, որ իբր թե շնորհիվ սուլթան Համիդի գործադրած ջանքերի, բալկանյան դաշինքը մինչև 1908 թվականը չի իրականացվել, և, հետևաբար, Բալկանյան պատերազմի փոթորիկը նրա ժամանակաշրջանում, կասեցվել է։

Սրանով, նշում է Նաբին, Աբդուլ Համիդին բալկանյան դժբախտության պատասխանատվությունից արդարացնելու հավակնորդներ կան և ավելացնում է. «Իրականում սրանից ավելի սխալ տեսակետ չի կարող լինել»[31]։

Բալկաններում ծավալված իրադարձությունների արմատները այս հեղինակը տեսնում է Աբդուլ Համիդի դարաշրջանի պատմական իրականության մեջ[32]։

Այստեղ, բնականաբար, Նաբին նախ և առաջ նկատի ունի Բեռլինի տրակտատի այն հոդվածները, որոնք հետագայում հիմք ծառայեցին Բալկանյան թերակղզում քաղաքական նոր փոփոխությունների կատարման համար։

Այդպիսով, Նաբին օսմանյան սահմանադրական շարժումից հետո կայսրության կրած տերիտորիալ կորուստների ամբողջ պատասխանատվությունը չի բարդում երիտթուրքերի վրա։ Ընդհակառակը, նա ընդգծում է, որ Աբդուլ Համիդին տապալելու և իշխանությունը իրենց ձեռքը վերցնելու ժամանակ Օսմանյան կայսրությունն արդեն «ծայրե ի ծայր փտած և կործանման եզրին կանգնած, աշխատելու անընդունակ մեքենա էր»[33]։

Այժմ տեսնենք, թե Յաշար Նաբին ինչպես է բացատրում բալկանյան ազատագրական պատերազմի առաջացումը։

«Ճշմարիտ է,— գրում է նա,— որ սահմանադրական հեղաշրջումը արագացրեց Բալկանյան պատերազմի առաջացումը»[34]։

Իսկ ինչու հատկապես սահմանադրական շարժումը պատճառ հանդիսացավ եվրոպական Թուրքիայի ու Էգեյան ծովի կղզիների

---

30 Danişmend, նշվ. աշխ., էջ 383։

31 Jaşar Nabi, Balkanlar ve Türkluk, Ankara, 1936, s. 34—35.

32 Նույն տեղում, էջ 35։

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում, էջ 45։

կորստյան համար։ Այդ հարցին նա պատասխանում է հետևյալ կերպ։

Աբդուլ Համիդի դարաշրջանում, օրեցօր քայքայվող շենքի ավերակները հեշտությամբ թալանելու համար բալկանյան պետությունները սպասում էին այդ շենքի ինքնիրեն կործանվելու օրվան։ Բայց, սահմանադրությունը վերջ տվեց այդ վիճակին և Օսմանյան կայսրությունում սկսվեց բարենորոգումների շրջանը։

Նշանակում է, որ Աբդուլ Համիդի ժամանակ քայքայվող կայսրությունը բարենորոգումների շնորհիվ պետք է ներքնապես և արտաքնապես ամրանար։ Այդ, բնականաբար, չէր կարող ձեռնտու լինել Օսմանյան կայսրության կործանմանը սպասող երկրներին, որոնք պետք է աճապարեին՝ ժամ առաջ կայսրության վրա հարձակվելու համար։ Այսպիսով, բալկանյան երկրները «...տեսնելով բարենորոգումների ժամանակաշրջանի սկսվելը, նախաձեռնվող գործի ավարտումը չիրագործված, հազիվ ինքնիրեն հավաքած կայսրության վրա հարձակվելու անհրաժեշտությունն ըմբռնեցին և արագորեն պատրաստվելու գործունեությանը ներգրավվեցին»[35]։

Դուրս է գալիս, որ պատերազմի գործում երիտասարդ թուրքերի պատասխանատվությունը բացառված է։ Որ նրանք, կայսրության ներքին կյանքի բարենորոգմանը ձեռնամուխ լինելով, հարուցեցին բալկանյան երկրների հարձակողական անզուսպ ցանկությունը։ Ավելին։ Դանիշմենդից առաջ այս հեղինակն այն միտքն է արտահայտել, որ թուրքական կառավարությունները բալկանյան երկրների հետ համաձայնության գալու ոչ մի ջանք չեն խնայել և նրանց պահանջներին գոհացում տալով, այլևս փոխադարձ հակասություններ չեն թողել և դրանով իրենց դեմ բալկանյան դաշինքն են առաջացրել։

«Թուրքիան բալկանյան երկրների հետ հնուց մնացած բոլոր անհամաձայնությունները վերացնելու համար ոչ մի զոհողությունից չի քաշվել և խաղաղության գործում երբեմն իր կենսական շահերը զոհաբերելով՝ բալկանյան համաձայնությանն է հանգեցրել»[36]։

Սա ոչ միայն հարցի դիտական մեկնաբանումը չէ, այլև զուրկ է պատմական իրականությանը որևէ չափով համապատասխանելուց։ Օսմանյան սահմանադրության վերահռչակումից շատ կարճ ժամանակ անց, երիտթուրքական պարագլուխների կողմից եղբայրության վերաբերյալ արտասանված կեղծ ու պատիր ճառերի և

---

35 Jaşar Nabi, նշվ. աշխ., էջ 45։

36 Նույն տեղում, էջ 50։

Թուրքական կեղծավոր ցույցերի մթնոլորտը չսառած, հենց 1908 թվականի հոկտեմբերին Դիարբեքիրի շրջանում կազմակերպված հայկական սպանդին[37] հաջորդեցին աղգամիջյան թշնամության հրահրումը և ջարդերը Մակեդոնիայում, Կրետեի կապակցությամբ հակահունական կամպանիան և ջարդերը, քրիստոնյա ժողովուրդների ազգային իրավունքների ոտնահարումը և բալկանյան երկրների նկատմամբ ագրեսիվ քաղաքականության դրսևորումը։

Այս հանգամանքներում բալկանյան դաշինքի ստեղծումը որպես ազատագրական պայքարի հիմք, միանգամայն տրամաբանական և արդարացի երևույթ էր։

Փոխանակ երիտթուրքերի այդ քաղաքականությունը քննադատելու, թուրք պատմաբանները, ներկա դեպքում՝ Նաբին, նրանց քննադատում է այն բանի համար, որ իշխանության նոր ղեկավարները բալկանյան պետությունների կողմից իրականացված «պատրաստություններին նշանակություն չեն տվել և ի սկզբանէ միջոցներ չեն ձեռնարկել»։ Եվ սա նրա կողմից համարվում է «նոր իշխանության ամենամեծ սխալը»[38]։ Այդ միջոցառումներից նա նշում է միայն մեկը, ըստ իրեն՝ ամենակարևորը և դա ամեն գնով մի քանի տարով պատերազմի հետաձգումն էր հանդիսանալու[39]։

Թուրք պատմագրությունը երիտթուրքերին մեղադրում է նաև նրանում, որ նրանք անհրաժեշտ ուշադրությամբ չեն վերաբերվել բալկանյան երկրների միավորման նշաններին։ Ավելին։ Թահսին Յունալը իր հիշյալ գրքում նշում է, որ բալկանյան դաշինքի ստեղծման վերաբերյալ իրենք տեղեկություն չեն ունեցել[40]։

Ուրեմն, ըստ նրա, բալկանյան պատերազմը միանգամայն անսպասելիորեն հայտնաբերված, չնախատեսված իրադարձություն էր։ Իսկ Քուրանը նշում է, որ Բալկանյան պատերազմը դեռևս սահմանադրության վերահռչակումից առաջ է պատրաստվել։ Սակայն այդ պատերազմի նախապատրաստմանը երիտթուրքերը լիովին անտեղյակ են եղել։ Դրա հիմնական պատճառն այն է,— նշում է նա,— որ երիտթուրքերը անընդհատ կուսակցական պայքարի մեջ լինելով,

---

37 Ըստ «Journal de St. Pétersbourg»-ի 1908 թվականի հոկտեմբերի 21-ի «Հայկական ջարդերը» հաղորդման, Վիրան-Շեհիրում հայկական սարսափելի ջարդի հետևանքով, սպանվել է ավելի քան երկու հազար հայ։

38 Jaşar Nabi, նշվ. աշխ., էջ 45։

39 Նույն տեղում։

40 Tahsin Ünal, նշվ. աշխ., էջ 204։

անտեղյակ են մնացել Բալկաններում իրենց դեմ պատրաստվող դաշինքից։

Մեկ այլ պատմաբան, Մուստաֆա Բաղբը, նշում է, որ բալկանյան դաշնակցության ստեղծման վերաբերյալ լուրերը «սկզբնական շրջանում չեն դիմավորվել անհրաժեշտ լրջությամբ»[41]։

Ըստ նրա, միայն 1912 թվականի օգոստոսի 22-ին Թուրքական մի թերթ կարճ հաղորդում է տվել Բուլղարիայի կողմից սահմանում ուժեր կենտրոնացնելու մասին և մի հեռագիր էլ հաղորդել է այդ մասին սեպտեմբերի 17 (30)-ին[42]։

Ստացվում է, որ բալկանյան դաշինքից գրեթե անտեղյակ Թուրքական կառավարությունը բալկանյան երկրների կողմից հանկարծակի է բերվել։

Որքա՞ն է արժանահավատ հիշյալ փաստարկը, Դանիշմենդը նշում է. «Սաիդ փաշայի կառավարության ամենամեծ սխալն այն է, որ ֆրանսիական կառավարության և Աթենքի Թուրքական դեսպանության խորհրդական Գալիբ Քեմալի բեյ Սոյլեմեզոլուի կողմից կատարված նախազգուշացումներին հակառակ, չի հավատացել բալկանյան դաշինքի գոյությանը»[43]։

Բացի այդ, Թուրքական պատմագրությունը մեղադրում է Թուրքական կառավարությանը նաև նրա համար, որ 1912 թվականի սեպտեմբերից, երբ արդեն բալկանյան երկրները սկսել էին իրենց զորահավաքը, «Մեծ կառավարությունը» առաջանալիք իրադարձություններին դիմագրավելու անհրաժեշտ եռանդ չի ցուցաբերել։

«Մինչդեռ բալկանյան երկրները խիստ գաղտնորեն զորահավաք են սկսում և պատերազմական միջոցների վերջին պակասներն են արագորեն լրացնում, Թուրքական կառավարությունը գերագնահատելով իր ուժերը, չափազանց դանդաղ էր շարժվում»[44] վրդովմունք է արտահայտում Նաբին։

Այս կարգի քննադատությունները պատմական իրականությանը չեն համապատասխանում։ Հայտնի է, որ 1908 թվականի հոկտեմբերյան իրադարձություններից հետո և Թուրք-բալկանյան երկրների հարաբերությունների սրվածության և իտալո-Թուրքական

---

41 Mustafa Bağıp, İttihat ve Terakki tarihinde esrar perdesi, İstanbul, 1934, s. 118.

42 Նույն տեղում, էջ 118—119։

43 Danişmend, նշվ. աշխ., էջ 388։

44 Jaşar Nabi, նշվ. աշխ., էջ 46։

պատերազմի հետևանքով, երիտթուրքերը զինվորական մեծ կենտրոնացումներ են կատարել եվրոպական Թուրքիայում, այնպես որ Բալկանյան պատերազմի նախօրյակին նրանք հանկարծակիի գալ կամ անպատրաստ լինել չէին կարող։

Բացի այդ, նույն հույն-բուլղարական մերձեցումը մասնավորապես և բալկանյան երկրների միջև կատարվող համաձայնության հրապարակային դրսևորումներն ընդհանրապես ոչ թե գաղտնիք էին, այլև եվրոպական մամուլի հաղորդումների ուշադրությունն էին գրավել արդեն բալկանյան դաշինքից ավելի քան երկու տարի առաջ։

Ճիշտ է, թեև հունական կառավարությունն առաջինը սկսեց զորահավաքը[45], բայց անմիջապես դրան հաջորդեց թուրքական կառավարության սեպտեմբերի 24-ի հրամանը՝ Թրակիայում գտնվող 10 պահեստային (ռեզիֆային զորակոչի վերաբերյալ)[46]։

Այնուհետև ամենաարագ կերպով համալրումներ և ռազմական տեխնիկա փոխադրվեց ու թուրք-բալկանյան սահմաններն ամրացվեցին։ Այնպես որ, Բալկանյան պատերազմը չսկսված, Թուրքիան արդեն պատրաստ էր։

Իրականում,— նշում է Նաբին,— չնայած Բալկաններում բռնկվելիք պատերազմում թշնամիների բազմությանը, թուրքական կառավարությունը կրկին վստահ էր իր հաղթանակին։ Նույն կարծիքին էին նաև եվրոպական պետությունները[47]։

Ինչպես երևում է, ժամանակակից թուրք պատմագրությունը երիտթուրքերին քննադատում է միայն այն պատճառով, որ նրանք չեն կարողացել թուրք-բալկանյան հարաբերությունների բնագավառում ինչպես հույն-սլավոնական, այնպես էլ սլավոնական երկրների միջև գոյություն ունեցած հակամարտությունները հարատև վիճակում պահել և դրանով անհնարին դարձնել հակաթուրքական բնույթ ունեցող բալկանյան դաշինքի ստեղծումը։

Բայուրը, այդ հարցում խստորեն դատապարտելով երիտասարդ թուրքերին, գրում է. «նրանց մեծամասնությունը տարիներ ի վեր Կրետեն Օսմանյան կայսրությանը միացնող սոսկ թուրքական դրոշակի առկայության պայմաններում Կրետե կղզու համար «Կրետե կամ՝ մահ» բնաբանով ցույցեր կազմակերպելով, իրենց կատարած

---

45 Международные отношения в эпоху империализма, серия II, т. XX, ч. II, № 770, с. 282.

46 Նույն տեղում, № 780, էջ 283։

47 Jaşar Nabi, նշվ. աշխ., էջ 46։

գործերով և ընդունած օրենքներով, հնուց ի վեր միմյանց հանդեպ կատաղի թշնամիներ հանդիսացած հույներին, բուլղարներին և սերբերին միավորել են Օսմանյան կայսրության դեմ։ Հետևաբար, այս գործում նրանց անմտությունը գերազանցում է դավաճանությանը»[48]։

Եթե կրետական հարցում երիտասարդ թուրքերը Հունաստանի նկատմամբ գրգռիչ ընթացք չբռնեին և ջանային համաձայնության գալ նրա հետ, ապա Հունաստանը հավանաբար հեռու կմնար Թուրքիայի դեմ ուղղված սլավոնական դաշինքին միանալուց, միաձայն նշում են թուրք պատմաբանները։

Դրանով նրանք քննադատում են ոչ թե երիտթուրքերի ագրեսիվ արտաքին քաղաքականությունը, այլ այդ քաղաքականության սխալ կիրառումը։ Եթե թուրք պատմագրությունը երիտասարդ թուրքերի արտաքին քաղաքականությունը Հունաստանի և ընդհանրապես բալկանյան երկրների նկատմամբ չի գնահատում որպես ագրեսիվ քաղաքականություն, ապա, բնականաբար, այդ երկրների ազգային-ազատագրական շարժումները չի կարող ընդունել։ Ավելին։

Բալկանյան երկրների և կամ ընդհանրապես Օսմանյան կայսրության կազմում գտնված ժողովուրդների, ինչպես նաև միավորման համար մղված ազգային-ազատագրական պայքարը նրանց կողմից գնահատվել է իբրև Օսմանյան կայսրության սեփական տերիտորիաների զավթման քաղաքականություն։ Այդպես է գրվել «Tarih» պաշտոնական պատմության հատորներում, այդպես են գրում նաև այժմ։

Այսպես. հիշյալ պատմության 3-րդ հատորում բալկանյան երկրների ազգային-ազատագրական պայքարը բնութագրված է հետևյալ կերպ. բալկանյան երկրների «նպատակն էր շպրտել Եվրոպայից օսմանյան տիրապետությունը և Բալկաններում գտնվող օսմանյան նահանգները բաժանել իրար միջև»[49]։

Իսկ Բայուրը գրում է, որ շնորհիվ սահմանադրության ստեղծած հնարավորությունների, հույների և հայերի զորեղ փոքրամասնություն կազմած վայրերում՝ Էգեյան ծովի կղզիներում, Արևելյան վիլայեթներում (այսինքն՝ Արևմտյան Հայաստանում—Գ. Բ.) և այլ վայրերում տնտեսական գերիշխանություն ստեղծելով՝ մտադրվում են ապագայում անկախություն ձեռք բերել և կամ հարևան պետություններին միանալ։ Նման դիտավորությունների խորհրդածումն

---

[48] Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 1, էջ 409.
[49] Tarih, cild III, Istanbul, 1935, s. 301.

անգամ ի վերջո հանգում է կայսրության կործանմանը, նշել է Բայուրը[50]։

Նույն միտքն է արտահայտում նաև Ֆահիր Արմաօղլուն, ընդգծելով, որ բալկանյան երկրները աչք էին դրել օսմանյան պետության բալկանյան տերիտորիաներին[51]։

Հունաստանի ազատագրական պայքարի նպատակները, որոնք արտահայտվում էին հունական տերիտորիաների ազատագրության՝ «Megalo Idea»-ի մեջ, Թուրք պատմագրության կողմից քննադատվում են իբրև զավթողական քաղաքականության դրսևորումներ։ Այդպես է դնահատվել նաև Կիպրոսի ազգային-ազատագրական պայքարը, որի վերաբերյալ Թահսին Յունալը գրել է, որ Կիպրոսի համար անկախություն պահանջող հունական քաղաքականությունը «Megalo Idea»-ի դրսևորումներից մեկն է հանդիսանում։

Այսպիսով, Թուրք պատմագրությունը, քննադատելով երիտասարդ Թուրքերի արտաքին քաղաքականության տակտիկան Թուրք-հունական և ընդհանրապես բալկանյան երկրների փոխհարաբերություններում, հանդես է գալիս Թուրքերի կողմից նվաճված երկրները Օսմանյան կայսրության կազմում պահելու դիրքերում։ Երիտ. Թուրքերը քննադատվում են այնքանով, որքանով որ նրանք չկարողացան պահպանել տերիտորիալ այն հսկայական ժառանգությունը, որ նրանք ստացել էին Աբդուլ Համիդից։

Սակայն, ոչ Աբդուլ Համիդը, ոչ երիտԹուրքերը և ոչ էլ Թուրք քաղաքական այլ գործիչներ ի վիճակի չէին կասեցնելու Օսմանյան կայսրության փլուզումը։

«Օսմանյան Թուրքիան ժողովուրդների բանտ էր, որոնք, չնայած իշխանությունների տեռորին և հալածանքներին, չէին դադարեցնում պայքարը իրենց ազատագրության համար»[52]։ Այդ ազատագրական պայքարն, ի վերջո, ավարտվեց Բալկաններում հունա-սլավոնական տերիտորիաների մեծ մասի ազատագրումով և դրանով վերջ տրվեց դարավոր հետամնացությանը, որ հետևանք էր արևելյան Եվրոպայում՝ Թուրքական արյունալի տիրապետության։

Թուրքական տիրապետությունն ամեն կերպ ճնշել և արգելակել էր նվաճված ժողովուրդների տնտեսական, քաղաքական և կուլտու-

---

50 Bayur, նշվ. աշխ., հ. 1, էջ 231։

51 Fahir Armaoğlu, Siyasî tarih dersleri, 1789—1919, Ankara, 1961, s. 442.

52 История международного рабочего и национально-освободительного движения, ч. I, изд. ВПШ и АОН при ЦК КПСС, 1959, с. 414.

բական զարգացումը։ Դրա հետևանքով, նվաճված ու կեղեքված բրիստոնյա ժողովուրդների ընդհանուր զարգացումը «ֆեոդալիզմի ամենաստոր ին և բարբարոսական աստիճանի վրա»[53] գտնվող Օսմանյան կայսրության կազմում չէր կարող լինել այնպես, ինչպես որ հնարավոր էր ազգային անկախության պայմաններում։

Մարքսիզմի հիմնադիրները, մասնավորեցնելով թուրքական տիրապետության բացասական հետևանքները բալկանյան երկրների նկատմամբ նշել են, որ «...Թուրքերի գոյությունը Եվրոպայում իրենց լուրջ արգելք է ներկայացնում Թրակիա-Իլլիրիական թերակղզու բնական հարստությունների զարգացման համար»[54]։ Թուրքական գերիշխանության պայմաններում ազգային փոքրամասնությունների նկատմամբ կատարվող կամայականությունները, հարբստահարությունները ու կեղեքումը չէին կարող անհետևանք մնալ։ Մյուս կողմից, նվաճված երկրներում կապիտալիստական հարաբերությունների համեմատաբար արագ զարգացումը և ազգային ինքնագիտակցության ձևավորումը հանդիսացան ազգային-ազատագրական շարժման հիմնական գործոնները։

Հույն-թուրքական հարաբերությունների սրումը հետևանք էր ոչ միայն երիտթուրքերի սուբյեկտիվ քաղաքականության, ինչպես նշում է թուրքական պատմագրությունը, այլև հիմնականում՝ դեպքերի բնականոն զարգացման։ Հետևաբար, թուրք պատմաբանների նշած սուբյեկտիվ պատճառների բացակայությունը կարող էր սոսկ որոշ ժամանակով մեղմացնել հույն-թուրքական հարաբերությունների խզումը։

Հունաստանում և Կրետե կղզում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը պահանջում էր ոչ միայն ներքին միասնական շուկայի ստեղծում, այլև՝ միասնական քաղաքական ղեկավարություն, որի պատճառով Կրետեն Հունաստանին միացնելը անհետաձգելի անհրաժեշտություն էր հանդիսանում։

Բացի այդ, հույն-թուրքական հարաբերությունները չէին կրում զուտ երկու անկախ պետությունների հարաբերությունների բնույթ, այլ ենթարկվում էին եվրոպական տերությունների ընթացիկ քաղաքականության պահանջներին, մի հանգամանք, որն ի վերջո վճռական ազդեցություն էր թողնում հույն-թուրքական վեճի վրա։

Երիտասարդ թուրքերը, այսպիսով, սահմանադրության վերահրատարակումից անմիջապես հետո, արտաքին քաղաքականության բը-

---

53 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, М., 1957, с. 6.

54 Там же.

նագավառում դրսևորեցին Օսմանյան կայսրության փլուզումը կասեցնելու և նրա տերիտորիալ ամբողջականությունը վերականգնելու ագրեսիվ ձգտումը, փորձելով պահպանել այս շրջանում միջնադարյան, ֆեոդալական ազդեցությունը։

Այդ իմաստով, կրետական հարցի շուրջը ծավալված թուրք-հունական հարաբերությունները երիտասարդ թուրքերի վարած ագրեսիվ քաղաքականության մեկ օրինակն է միայն, որով մենք ցանկացանք ցույց տալ այդ քաղաքականության բնույթը։

Г. С. КИЛИМДЖЯН

ТУРЕЦКАЯ ИСТОРИОГРАФИЯ О ТУРЕЦКО-ГРЕЧЕСКИХ ОТНОШЕНИЯХ (1908—1912 гг.)

Резюме

После переворота 1908 г. младотурки добивались возвращения бывших османских территорий. В связи с этим они активизировали свою политику в критском вопросе, вследствие чего греко-турецкие отношения приняли весьма напряженный характер.

Современные турецкие историки оправдывают эту агрессивную политику младотурок. По их убеждению, при новом режиме блага, которыми пользовались в конституционных государствах Европы, распространятся и на все территории Османской империи.

Следовательно,—заключают они,—было бы естественным возвращение прежних территорий империи Турции.

Младотурки подвергаются критике лишь за то, что они не смогли сохранить огромное территориальное наследство, полученное ими от Абдул Гамида. Критике подвергается тактическая линия внешней политики. Поэтому критика турецких историков исходит из интересов турецких господствующих кругов.